ԳԼՈԲՈՒՄ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՎՐԱՍՏԱՆ.

ՓՈՓՈԽՎՈՂ ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՅԼԱԴԱՎԱՆ ՀԱՅԵՐԻ ԽՆԴԻՐԸ

17

Հոկտեմբեր, 2007

«ՆՈՐԱՎԱՆՔ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԳԼՈԲՈՒՍ
Վերլուծական տեղեկագիր

ГЛОБУС
Аналитический бюллетень

№ 17 (25)
Հոկտեմբեր, 2007թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վրաստան. իրավիճակի փոփոխություն 3

Азербайджанцы в Грузии:
претензии на автохтонность 8

Ադրբեջան-Թուրքիա էներգետիկ համագործակցության
արդի հիմնախնդիրները 11

Турция перед началом войны 14

Այլադավան հայերի խնդրի շուրջ 16

Եվրոպան քրիստոնեության և իսլամի միջև 19

Вопросы демографии и репатриации
в «диаспоральных» странах 22

Армянская община Крыма 26

ՎՐԱՍՏԱՆ. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հավանական է, որ 2003թ. վարդերի հեղափոխությունից հետո առաջին անգամ Թբիլիսին ստիպված լինի փոփոխություններ մտցնել իր արտաքին քաղաքականությունում: Թեև խոսքը հիմնարար տեղաշարժի մասին չէ, սակայն այս պարագայում պետք է ավելի շատ ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ փոփոխությունները կրելու են կոնկրետ բնույթ, և ինչն էլ ավելի տպավորիչ է՝ վրացական կողմն այդ փոփոխությունները, ըստ էության, ձեռնարկելու է հարկադրաբար:

Մյուս կողմից՝ նախորդ 2-2.5 ամսում ի հայտ եկած ցուցիչները ոչ միայն թույլ են տալիս կատարել նման հետևություն, այլև վկայում են, որ երևան եկած գործընթացն ակտիվ փուլում է, իսկ դրա ավարտի մասին կարելի է խոսել միայն 2008թ. ապրիլին Բուխարեստում կայանալիք ՆԱՏՕ հերթական գագաթաժողովից հետո:

Տեղաշարժ ռուսական քաղաքականությունում

Հիմնական գործոնը, որը բնութագրում է նոր իրավիճակը, Վրաստանի նկատմամբ ռուսական քաղաքականության մեջ տեղ գտած փոփոխությունն է, որն ակնհայտ դրսևորումներ ստացավ անցած շուրջ երեք ամիսների ընթացքում: Թեև նշված ժամանակահատվածում Վրաստանի նկատմամբ Մոսկվայի մոտեցման մեջ չգրանցվեց որևէ սկզբունքային տեղաշարժ, սակայն կոնկրետ փոփոխության ենթարկվեց Թբիլիսիի ուղղությամբ ռուսական ռազմաքաղաքական ճնշումն ապահովող ձեռնարկների բնույթը:

Ս.թ. հոկտեմբերի 17-ին հայտնի դարձավ, որ նույն օրը Վիեննայում՝ ԵԱՀԿ կենտրոնակայանում կայացած այդ հաստատության փորձագետների հատուկ խումբը պաշտոնական եզրակացության է եկել, թե այս տարվա օգոստոսի 6-ին Վրաստանի Գորիի շրջանի Ցիտելուբանի գյուղի մերձակայքում տեղ գտած հրթիռային հարձակումն իրականացրել է ռուսական օդուժը:

Չնայած պաշտոնական Մոսկվան շարունակում է հերքել իր մասնակցությունը նշված միջադեպին, սակայն Ցիտելուբանի գյուղի մերձակայքում տեղի ունեցած հրթիռային հարձակման առնչությամբ դեռևս օգոստոսի սկզբներին ուշադրություն գրավեցին հետևյալ հանգամանքները.

- փաստորեն, սկիզբ դրվեց Վրաստանի դեմ լիարժեք օդային հարձակումների պրակտիկային (հասկանալի է, որ այսօր նման քայլի հնարավորություն Ռուսաստանն ունի, իսկ Աբխազիան ու Հարավային Օսիան տեխնիկապես ի վիճակի չեն իրականացնել նման ձեռնարկներ),
- կոնկրետ օգոստոսի 6-ի միջադեպի կապակցությամբ առանձնացավ այն կետը, որ արձակված հրթիռը տակտիկական հակառադարային հեռակառավարվող հրթիռ էր[1], այսինքն՝ անկախ նշված միջադեպի արդյունքից[2], խնդիր էր դրվել ցույց տալ, որ նպատակ կա առնվազն ճնշել, թուլացնել վրացական զինված ուժերի հակաօդային պաշտպանության բաղկացուցիչը,
- իրականում, նախորդ կետը պարզ *մեսիջ* էր Թբիլիսիին, որ Աբխազիայի և/կամ Հարավային Օսիայի հետ հավանական բախման պարագայում վրացական կողմը տանուլ է տալու պատերազմի օդային մասը, հետևաբար՝ հայտնվելու է խիստ աննպաստ իրավիճակում,
- էլ ավելի կարևոր է այն կետը, որ չնայած ամերիկա-վրացական ու եվրոպա-վրացական խորացող ռազմաքաղաքական հարաբերություններին՝ Մոսկվան քաղաքական որոշում կայացրեց ու իրականացրեց նման տիպի քայլ,
- ներկայացվածի համատեքստում հատկանշական էր ընտրված կետը. Ցիտելուբանին Թբիլիսիից հեռու է ընդամենը 65կմ,

---

[1] Վրացական և արևմտյան աղբյուրների ներկայացմամբ՝ ս.թ. օգոստոսի 6-ին Ցիտելուբանի գյուղի մերձակայքում արձակվել է ռուսական *«Радуга КН-58»* տիպի հրթիռ (ըստ ՆԱՏՕ-ական դասակարգման, *«AS 11 Kilter»):*

[2] Հիշեցնենք, որ արձակված հրթիռը չպայթեց:

- տեղի ունեցածը տեղեկատվական-հոգեբանական ճնշում էր Վրաստանի նկատմամբ, սակայն կարևորն այստեղ այն է, որ նման հնչեղության, այսինքն՝ համապատասխան նպատակ ունեցող ակցիան նաև ենթադրում է բնույթով նման այլ ձեռնարկների իրականացում:

Հետևաբար, պետք է ներկայացված տրամաբանության ներքո դիտարկել նաև օգոստոսի 6-ի միջադեպից մոտ երկու շաբաթ անց՝ օգոստոսի 21-ին տեղ գտած իրադարձությունը: Թեև Թբիլիսին այդ օրը հայտարարեց, թե ֆիքսել է Ռուսաստանի կողմից Կոդորի կիրճի ուղղությամբ վրացական օդային տարածք ներխուժած ռուսական ռազմական ինքնաթիռի թռչելու պահը, իսկ օգոստոսի 24-ին՝ թե այդ ինքնաթիռը խփվել է[1], իսկ Մոսկվան էլ կրկին շտապեց հերքել նման թռիչքի իրողությունն անգամ, սակայն փաստն այն էր, որ մեկ ամսվա մեջ արդեն երկրորդ անգամ Թբիլիսին հայտնվեց տեղեկատվական-հոգեբանական նման տիպի ճնշման ներքո:

Վրաստանի ուղղությամբ ռուսական քաղաքականության մեջ տեղ գտած փոփոխության հաջորդ կարևոր ցուցիչը նույն Թբիլիսիի նկատմամբ Աբխազիայի ու Հարավային Օսիայի գծերով ի հայտ եկած տարրերն են:

Այդ իմաստով հարկ ենք համարում առանձնացնել երկու ուշագրավ դրվագ:

Օգոստոսի 31-ին տարածված տեղեկության համաձայն՝ Հարավային Օսիայի նախագահ Էդուարդ Կոկոյտին մտադիր էր դիմել Մոսկվային՝ հանրապետության տարածքում հակաօդային պաշտպանության համակարգի տեղակայման նպատակով:

Հաշվի առնելով Ցխինվալի աշխարհագրական դիրքը՝ Հարավային Օսիայում նման համակարգի տեղակայումը կարող է լրջորեն սահմանափակել վրացական օդուժի օպերատիվ-տակտիկական հնարավորությունները՝ այդ թվում աբխազական ուղղությամբ:

Անշուշտ, այդպիսի հայտարարությունը միտված է, իրականում, նման տեղակայման հնարավորություն ստեղծող անհրաժեշտ տեղեկատվական ֆոնի ձևավորմանը, սակայն գլխավորն այստեղ այն է, որ նպատակ կա փոխել նախկինում մի զգալի մասով զուտ տակտիկական նշանակության մարտերի համար նախատեսված հարավօսական զինված ուժերի բնույթը: Այսինքն՝ Աբխազիայի և/կամ Հարավային Օսիայի հետ հավանական բախման դեպքում վրացական բանակը ստիպված է լինելու գործ ունենալ ռազմավարական կարգի միանգամից երկու ուղղության հետ:

Երկրորդ կարևոր դրվագը սեպտեմբերի 26-ին կտրուկ սրված իրավիճակն էր հարավօսական ու աբխազական հակամարտության գոտիներում: Այդ օրը երեկոյան Ցխինվալի ու նրան հարակից վրացական Նիկոզի ու Էրգնեթի գյուղերի միջև տեղի ունեցած լուրջ փոխհրաձգության արդյունքում (այդ թվում՝ ծանր զինատեսակների օգտագործմամբ) ճակատային գիծ ուղղվեցին հարավօսական ու աբխազական[2] բանակային կազմավորումներն ու ծանր զինտեխնիկան:

Հարկ է առանձնացնել ոչ այնքան այն, որ ճգնաժամային իրավիճակում աբխազական ու հարավօսական զինված ուժերը գործեցին միասնաբար[3] (նման պայմանավորվածություն ձեռք էր բերվել վաղուց), որքան այն, որ, իրականում, ռուսական կողմը փորձարկեց Վրաստանին ռազմական գործողությունների մեջ ներքաշելու սցենար:

Անշուշտ, աբխազական ու հարավօսական գծերում ի հայտ եկած լարվածության աճն օգոստոսի 6-ին ու 21-ին տեղի ունեցած միջադեպերի տրամաբանական շարունակությունն էր, սակայն հիմնական հետևությունն այն է, որ ներկայացվածն արտացոլում է Վրաստանի նկատմամբ Ռուսաստանի ռազմաքաղաքական ընդլայնվող ճնշման համալիր բնույթը:

---

[1] Ուշագրավ է, որ Կոդորի կիրճում խփված ռազմական ինքնաթիռի մասին տեղեկությունն օգոստոսի 25-ին անուղղակի կերպով հաստատեց նաև Աբխազիայի զինված ուժերի Գլխավոր սպայակույտի պետ Անատոլի Զայցևը՝ հայտարարելով, թե կիրճում աբխազական ռազմական հենակետերը ֆիքսել են ինքնաթիռի կործանման փաստը: Նա, սակայն, կասկած հայտնեց, թե ինքնաթիռը խփվել է վրացիների կողմից և որ այն ռուսական էր:

[2] Աբխազական զորքերի տեղաշարժն այդ երկրի նախագահ Սերգեյ Բագապշը բացատրեց նաև ս.թ. սեպտեմբերի 20-ին Աբխազիայի Տկվարչելի շրջանում տեղի ունեցած միջադեպով, երբ վրացական զորամիավորման հետ բախման արդյունքում զոհվեցին աբխազական բանակում ծառայող երկու ռուս սպաներ:

[3] Աբխազական ու հարավօսական կողմերի համատեղ գործելու վերջին օրինակը հոկտեմբերի 5-ին Մոսկվայում Սերգեյ Բագապշի ու Էդուարդ Կոկոյտիի եռակողմ ձևաչափով հանդիպումներին էին ռուսական ռազմական ու անվտանգության մարմինների ներկայացուցիչների հետ:

Օկրուաշվիլու քայլը

Վրաստանի պաշտպանության նախկին նախարար Իրակլի Օկրուաշվիլու հետ կապված զարգացումներն ուշագրավ էին ոչ այնքան այն առումով, որ Սահակաշվիլու նախկին զինակիցը բավական լուրջ մեղադրանքներ ներկայացրեց վերջինիս[1], այլ այն պատճառով, որ 2003թ. վարդերի հեղափոխությունից հետո առաջին անգամ համալիր բնույթի փորձ արվեց եթե ոչ հասնել Սահակաշվիլու պաշտոնանկությանը, ապա գոնե լրջորեն թուլացնել նրա իշխանությունը:

Այդ առումով հարկ է ուշադրություն դարձնել հետևյալ կետերի վրա.

- նման ծանր մեղադրանքներ ներկայացնելով Սահակաշվիլուն՝ Օկրուաշվիլին հասկանում էր, որ իշխանության համար ամենաանընդունելի տարբերակով դնում է իշխանափոխության հարց, հետևաբար՝ Վրաստանի պաշտպանության նախկին նախարարը չէր կարող չհասկանալ, որ նման կարգի ակցիայի մեկնարկը պահանջում է արտաքին աջակցություն՝ գոնե սեփական անձի անվտանգությունը երաշխավորելու առումով,
- արտաքին գործոնի ներգրավվածության մասին է խոսում նաև Պատարկացիշվիլու մասնակցությունը նշված ակցիային. դժվար թե քաղաքական պայքարում փորձ ունեցող օլիգարխն[2] առանց հիմնարար ուժի գնար նման քայլի, իսկ այսօրվա Վրաստանում այդպիսի ուժ կարող էր ի հայտ գալ միայն երկրից դուրս,
- հատկապես նման մեղադրանքներից հետո վրացական իշխանությունների որոշումը՝ ձերբակալել Օկրուաշվիլուն, քաղաքական պայքարի տեսանկյունից, անշուշտ, կոպիտ սխալ էր, ինչը չէին կարող չհասկանալ Սահակաշվիլու վարչակազմում, հետևաբար՝ նման որոշումը կարող էր վկայել միայն մի բան՝ վտանգն իրոք լուրջ է եղել,
- այդ ենթադրության օգտին են խոսում առնվազն հետևյալ փաստերը՝ Վրաստանի պաշտպանության նախկին նախարարի ձերբակալման օրը՝ սեպտեմբերի 27-ին, Թբիլիսիի մոտակայքում տեղակայված վրացական բանակի 4-րդ բրիգադի զորամասում այդ երկրի հատուկ ծառայությունների իրականացրած գործողության արդյունքում ձերբակալվեցին մոտ 20 զինծառայողներ[3], այդ ընթացքում ԱՄՆ-ում գտնվող նախագահ Սահակաշվիլին ստիպված եղավ կարճել իր օտարերկրյա շրջագայությունը (նա չմեկնեց Հունաստան) և սեպտեմբերի 29-ին շտապ վերադարձավ Թբիլիսի՝ ըստ որոշ տեղեկությունների, վերադասավորումներ իրականացնելով վրացական ներքին գործերի ու ազգային անվտանգության համակարգերում, և վերջապես՝ Օկրուաշվիլու ձերբակալությունից հետո Վրաստանի անվտանգության մարմինները հետապնդումներ սկսեցին վերջինիս օրոք պաշտպանության նախարարությունում բարձր պաշտոններ զբաղեցրած անձանց դեմ[4]:

---

[1] Հիշեցնենք, որ ս.թ. սեպտեմբերի 25-ին հանդես գալով վրացական օլիգարխ Բադրի Պատարկացիշվիլուն պատկանող «Իմեդի» հեռուստաընկերության ուղիղ եթերում՝ Օկրուաշվիլին հայտարարեց, թե ժամանակին Վրաստանի նախագահն իրեն հանձնարարել է կազմակերպել Պատարկացիշվիլու սպանությունը, բացի այդ՝ թե Վրաստանի նախկին վարչապետ Զուրաբ Ժվանիան մահացել է ոչ այն տանը, ուր հայտնաբերվել էր նրա դիակը՝ փաստորեն, այդ գործում անուղղակիորեն մեղադրելով Սահակաշվիլու վարչակազմին, և որ 2006թ. գարնանը Վրաստանի նախագահը վերջին պահին հրաժարվել է կյանքի կոչել Հարավային Օսիայից ռուս խաղաղապահների դուրսբերման ծրագիրը: Օկրուաշվիլին ձերբակալվեց սեպտեմբերի 27-ին և $6 մլն գրավի դիմաց ազատ արձակվեց հոկտեմբերի 9-ին:

[2] Հիշեցնենք, որ Պատարկացիշվիլին 2003թ. վարդերի հեղափոխության ֆինանսիստներից է:

[3] Ըստ որոշ տեղեկությունների գործողությանը նախորդել է մոտ 10 րոպե տևած փոխհրաձգություն: Բացի այդ, գործողության ընթացքում վրացական հատուկ ծառայությունները գործի են դրել զգալի թվով ուժեր, այդ թվում՝ ուղղաթիռներ: Հարկ ենք համարում նշել, որ ս.թ. սեպտեմբերին, երբ Օկրուաշվիլին մտնում էր քաղաքական պայքարի մեջ, ի շարս այլ առավելությունների՝ նշվում էր, որ նա լուրջ աջակցություն ունի վրացական բանակի մի որոշ մասի կողմից:

[4] Հոկտեմբերի 4-ին հայտնի դարձավ, որ վրացական իրավապահ մարմինների կողմից հետապնդվող Վրաստանի պաշտպանության նախարարության Գնումների վարչության նախկին պետ Յասոն Չիխլաձեն կեղծ անձնագրով Թուրքիայից անցել է Ռուսաստան: Թուրքիայից անհետացել է նաև Օկրուաշվիլու օրոք փոխնախարար ու ռազմական ոստիկանության պետ աշխատած Ալեքսանդր Սուխիտաշվիլին: Վրացական անվտանգության մարմինների ներկայացմամբ՝ նշված անձինք մի ժամանակահատված Թուրքիայում եղել են Օկրուաշվիլու հետ:

Եթե փորձենք ընդհանրացնել, ապա ավելի հավանական է դիտվում այն տարբերակը, որ ո՛չ Միացյալ Նահանգներին և ո՛չ էլ եվրոպական տերություններին ձեռնտու չէր կարող լինել Սահակաշվիլու փոխարինումը Ռուսաստանի դեմ ավելի արմատական տրամադրված Օկրուաշվիլիով և այն էլ նման ցնցումային եղանակով՝ վտանգելով արևմտյան ազդեցությունը Վրաստանում: Փոխարենը, այդպիսի ակցիան առաջին հերթին շահավետ կլիներ Մոսկվայի համար, և Արևմուտքից զատ միայն Ռուսաստանը կարող էր իրականացնել այդպիսի ձեռնարկ:

Արևմուտքի արձագանքը

Թեև օգոստոսից ի վեր լրջորեն սրված ռուս-վրացական հակամարտության ողջ ընթացքում ամերիկյան ու եվրոպական դիվանագիտություններն ու տեղեկատվական քաղաքականությունները սատարում էին Վրաստանին, սակայն իրականում նշված ժամանակահատվածն առանձնացավ ռուս-վրացական հակամարտության առնչությամբ և ընդհանրապես վրացական ուղղությամբ արևմտյան դիրքորոշման ոչ մեծ, բայց անսովոր մանևրներով:

Ս.թ. հոկտեմբերի 3-4-ը Վրաստանում էր ՆԱՏՕ գլխավոր քարտուղար Յաապ դե Հոոպ Սխևերը: Թեև Թբիլիսիում նա հայտարարեց, թե ՆԱՏՕ-Վրաստան հարաբերություններում մի երրորդ երկիր չի կարող ունենալ որոշիչ ձայն՝ ակնարկելով Ռուսաստանին, բայց Սխևերի այցը նշանավորվեց երկու շատ էական կետով.

- չնայած վրացական կողմի սպասումներին՝ ՆԱՏՕ գլխավոր քարտուղարը որևէ կոնկրետ խոստում չտվեց 2008թ. ապրիլին Բուխարեստում Թբիլիսիին՝ ՆԱՏՕ անդամակցության ճանապարհին վերջին փուլի՝ *MAP-ի («Membership Action Plan»)* շնորհման վերաբերյալ,
- ավելին՝ Սխևերն ուղղակի հայտարարեց, թե ՆԱՏՕ անդամակցության ճանապարհին Վրաստանը դեռ շատ գործ ունի անելու՝ հատկապես առանձնացնելով փոքր ու արդյունավետ բանակ ստեղծելու պահանջը, ինչն ուղղակի հակասության մեջ է մտնում Սահակաշվիլու վարչակազմի վարած ռազմական շինարարության քաղաքականության հետ[1]:

ՆԱՏՕ-Վրաստան հարաբերությունների տեսանկյունից ուշագրավ էր նաև Ֆրանսիայի պաշտպանության նախարար Էրվե Մորինի հոկտեմբերի 3-ի հայտարարությունը, որ Փարիզը դեմ է Հյուսիսատլանտյան դաշինքին Թբիլիսիի անդամակցությանը, եթե դա կբերի Ռուսաստանի հետ առճակատման:

Ամենաուշագրավ փաստը, սակայն, առնչվում է Վրաստանի խորհրդարանի խոսնակ Նինո Բուրջանաձեին: Օկրուաշվիլու հետ կապված զարգացումների ընթացքում՝ հոկտեմբերի 4-ին հայտնի դարձավ, որ վրացական օրենսդիրների ղեկավարը հրավիրվել է Վաշինգտոն:

Անշուշտ, նման հրավերը խոսում է Վաշինգտոնում Բուրջանաձեի կշռի մեծացման մասին, սակայն այս պարագայում կարևորն այն է, որ նաև այդ հրավերն է վկայում, որ առաջիկայում վրացական քաղաքական դաշտում պետք է որ զգլաիորեն ամրապնդվի Վրաստանի խորհրդարանի խոսնակի ազդեցությունը[2]: Այդ հանգամանքն ավելի ինտրիգային է թվում հատկապես այն տեղեկության ֆոնին, ըստ որի՝ եթե 2004թ.՝ նախագահի պաշտոնը ստանձնելու ժամանակ, Սահակաշվիլու վարկանիշը հասնում էր 86%-ի, ապա այսօր այն կազմում է ընդամենը 16%[3]:

---

[1] Վրաստանի ղեկավարության որոշմամբ՝ առաջիկա ամիսներին բանակի թվակազմը 28 հազարից հասցվելու է 32 հազարի, իսկ գալիք տարվա ռազմական բյուջեն կկազմի $783 մլն՝ 2006թ. մոտ $200 մլնի դիմաց:

[2] Այստեղ հարկավոր է նշել, որ Բուրջանաձեի ամուսինը Վրաստանի սահմանապահ զորքերի հրամանատարն է: Այսօր վրացական սահմանապահ զորքերն այդ երկրի ողջ զինված ուժերի 25%-ն են: Բուրջանաձեի հայրը՝ Անզոր Բուրջանաձեն, Վրաստանի ամենահարուստ մարդկանցից մեկն է, ով բիզնես-կապեր է ունեցել Շևարդնաձեի ընտանիքի ու անգամ Աջարիայի նախկին ղեկավար Ասլան Աբաշիձեի հետ:

[3] Աղբյուրը ամերիկյան հանրահայտ *«Stratfor»* վերլուծական կենտրոնն է:

Հետևություններ

Ներկայացվածը հիմք է տալիս ենթադրելու, որ առաջիկա ամիսներին՝ մինչև 2008թ. ապրիլին Բուխարեստում կայանալիք ՆԱՏՕ գագաթաժողովը, Ռուսաստանը կոշտ ռազմաքաղաքական գիծ է վարելու Վրաստանի նկատմամբ՝ հնարավոր է՝ աստիճանաբար մեծացնելով ճնշումը:

Մոսկվան նման քայլի է գնում նաև այն պատճառով, որ վրացական քաղաքական դաշտում չունենալով ազդեցիկ դաշնակից՝ Ռուսաստանը փորձում է իր համար որոշակի քանակությամբ բաժնետոմսեր ապահովել 2008թ. ընտրությունների արդյունքում ձևավորվելիք վրացական խորհրդարանում և նախագահական ընտրությունների արդյունքում ստեղծվելիք նոր վարչակազմում:

Սակայն ռուսների հիմնական թիրախն, անշուշտ, ՆԱՏՕ-Վրաստան հարաբերություններն են: Այս օգոստոսից ի վեր վրացական ուղղությամբ ձեռնարկելով 2003թ. վարդերի հեղափոխությունից հետո աննախադեպ սրության արտաքին ու ներքին ճնշումներ՝ Մոսկվան նպատակ ունի *մեսիջ* ուղարկել առաջին հերթին Արևմուտքին, թե ՆԱՏՕ-Վրաստան ձևաչափում ինքը սահմանել է «կարմիր գիծ» և այդ գիծը խախտելու դեպքում կա քաղաքական որոշում՝ ձեռնարկել համապատասխան քայլեր:

Բայց գլխավոր հետևությունը դա էլ չէ: Եթե ճիշտ է ներկայացված փաստերի մեկնաբանությունը, ապա Արևմուտքում որոշում է կայացվել գոնե առայժմ հաշվի առնել ռուսական «կարմիր գիծը»: Գլխավոր հետևությունը պետք է հենց սա լինի, և եթե այն ճիշտ է, ապա ցուցիչները մենք կտեսնենք 2008թ. ապրիլին Բուխարեստում:

Սարգիս Հարությունյան
«Նորավանք» հիմնադրամ

АЗЕРБАЙДЖАНЦЫ В ГРУЗИИ: ПРЕТЕНЗИИ НА АВТОХТОННОСТЬ[1]

От редакции:

Эта, на наш взгляд, достаточно интересная статья, которая, безусловно, может заинтересовать и армянского читателя, представлена Сергеем Юрьевичем Румянцевым[2], проводившим биографические интервью с грузинскими азербайджанцами.

Отметим, что здесь не обсуждается историчность и правдоподобность представленных в рамках статьи исторических нарративов, так как в данном случае важнее восприятие и интерпретация исторического прошлого, нежели объективный историцизм. Как правило, поведенческие нормы в обществе обуславливаются именно подобными (часто ложными) восприятиями истории и действительности. От этого восприятия и зависит степень присутствия прошлого в настоящем.

Посмотрим, какие мифы и стереотипы виртуализируются в азербайджанской среде Грузии и какова их тематика и направленность, основываясь на содержательном материале данного полевого исследования.

Примечательно, что одним из ключевых направлений в восприятии истории является именно ссылка на «давность» присутствия азербайджанцев на грузинской земле. Как правильно замечает автор, ссылаясь на В.Шнирельмана, «апелляция к древности, как известно, приобретает особую значимость в эпоху национализма». Мы же добавим, что ссылка на историю приобретает важное значение в период формирования политических концепций и является своего рода механизмом легитимизации определенных политико-территориальных претензий со стороны этнической элиты (хотя нам видится достаточно полемичным использование термина «этническое» в случае с азербайджанцами, но этот дискурс вне рамок данной статьи).

Ниже представляем отдельные отрывки из вышеупомянутой статьи:

* * *

«Кто мы на земле Грузии: пришельцы или автохтоны?»

Историк, учитель средней азербайджанской школы в одном из селений в Грузии уверенно заявляет: *«Точно известно, 550 лет мы уже на этой земле живем»* (муж., около 50 лет),

Проректор Марнеульского филиала государственного университета им. Джавахишвили попытался обнаружить более глубокие корни. Отвечая на вопрос, когда было образовано пограничное с Арменией селение Садахло, он предложил следующий вариант:

«Очень давно, точно сейчас уже никто и не знает. Известно, что «садах» означает колчан для стрел, и это связанно с кипчаками. Их еще в 11-ом веке на эти территории переселял Давид Строитель. Ну а потом были разные миграции и другие тюркские племена пришли сюда. Это были уже огузы-карапапахи. Вот мы как раз и есть карапапахи» (муж., около 45 лет).

Подобные представления в той или иной вариации разделяются, видимо, практически всеми азербайджанцами, проживающими в Грузии. Вместе с тем, возможны и другие вариации…

---

[1] Материал написан на основе статьи Сергея Румянцева «Азербайджанцы в Грузии. Этнические границы в «постмногонациональную» эпоху». Статья напечатана в журнале «Диаспора», но. 1-2, 2007, с.160-184.

[2] Сергей Юрьевич Румянцев, кандидат социологических наук, научный сотрудник Института философии и политико-правовых исследований Академии наук Азербайджана, директор Центра независимых социальных исследований «NOVATOR» (г.Баку).

Собственно, грузинская историография также рассматривает территории, на которых проживают азербайджанцы, как «исконно грузинские». Появление же на этих территориях тюрков связывается с политикой царя Давида Строителя, а также в большой степени с миграциями начала второго тысячелетия и более позднего периода.

Следует также заметить, что разный взгляд на «этническую принадлежность» грузинских территорий, компактно заселенных азербайджанцами, отражается и в «войне» топонимов. Азербайджанцы упрямо называют их Борчалы, грузинские же власти, не менее упорно, обозначают их как Квемо Картли. Естественно, первое обозначение широко распространено и в самом Азербайджане. Символическая приверженность топониму проявляется и в одноименном обозначении самой жизнеспособной из действующих в Азербайджане неправительственных организаций, цель которой – защита интересов грузинских азербайджанцев. При обществе издается и газета «Борчалынын сеси» («Голос Борчалы»).

На «большой родине» представления об автохтонности несколько иные. В государственных учебниках истории [Азербайджана] для средних школ «Древний Борчалы» обозначается как территория исторического Азербайджана. При этом возможны различные интерпретации. Например, два ведущих республиканских специалиста [Азербайджана] видят проблему следующим образом: «Территория исторического Азербайджана составляет свыше 300 тыс. кв.км. Из них на долю Северного Азербайджана приходится 125 тыс. кв.км, а остальное – Южного Азербайджана. Официально, территория Азербайджанской Республики составляет 86 600 кв.км., остальная часть коренного Азербайджана по военно-политическим, историческим и иным причинам входит в состав Российской Федерации, республик Грузия и Армения». Все чаще звучит в Азербайджане и понятие «аборигены». Комментируя решение ЦИК Грузии о том, чтобы печатать избирательные бюллетени на азербайджанском языке для местного аборигенного населения тех самых местностей, сразу вспоминают об автохтонном языке азери»[1].

...Этнический активист С.Аллахвердиев говорит: *«Еще древнеримский полководец Луккул в своих летописях рассказывает о древних борчалинцах.* ***Дело в том, что когда он собирался в поход против Иберии, путь его пролегал через места, населенные нашими предками.*** *Луккулу его советники категорически отсоветовали связываться с борчалинцами, и, ознакомившись с ними, великий полководец решает не испытывать судьбу и не только идет с ними на мировую, но и платит им дань за то, чтоб его войска беспрепятственно пропустили через Борчалы».* Этноисторический миф, рисуя участие «борчалинцев» в известных событиях, демонстрирует древность пребывания их в регионе, о чем сами «борчалинцы», в массе своей, пока не подозревают, ведь предмета «История Азербайджана» в школах в Грузии не существует»[2].

* * *

От редакции:

Далее приведем отрывок, где представляется восприятие грузинами собственно азербайджанцев, в интерпретации самих азербайджанцев.

* * *

Прежде всего, повседневные отношения (за исключением, видимо, Тбилиси) между грузинами и азербайджанцами можно расценивать как непростые, а теперешнюю ситуацию в Грузии – и как дискриминацию. Это может быть ощущение себя человеком «второго сорта», которое широко распространено среди азербайджанцев. Оно, впрочем, не означает, что имеют место дискриминационные практики в виде сознательного курса властей, но ощущение

---

[1] Что такое хорошо и что такое плохо. Раздел «Хорошие» новости// Реальный Азербайджан. 2006, 18 августа, с. 3.

[2] «Не нужно себя обманывать: образ других народов или собственный образ, который живет в нашей душе, зависит от того, как в детстве нас учили истории». См.: Ферро М., Как рассказывают историю детям в разных странах мира. М., 1992, с. 8.

разницы статусов возможно и на уровне быта, когда, например, звучит пренебрежительное обращение к азербайджанцам как «татарам» (грузинское – «татребо»):

«До 92-го года это был единый союз, единое государство. И что я могу сказать...По отношению грузин к другим национальностям, всегда чувствовалось какое-то высокомерие, что ли... Значит, если разделить по национальностям эти отношения, то они продолжались от более-менее терпимого до совсем недоброжелательного. Ну, скажем так, к армянам относились терпимо, к русским тоже... Ну, к русским не так доброжелательно... ***Я мог бы сказать, к армянам более терпимо, потом к русским, а хуже всего относились к азербайджанцам.*** *Вплоть до того, что вплоть до сих пор азербайджанцев не называют по их национальной принадлежности. Да, то есть азербайджанцами. Их до сих пор называют «татребо»... Я говорю чисто о своих ощущениях. В их языке татары, это, может быть, не такое оскорбительное, конечно /слово/, фактически есть такая нация, там казанские татары, вот... Но в их произношении, в самом произношении этого слова, в их отношении, оно имеет оскорбительный характер» (муж., 31 год).*

* * *

От редакции:

Аналогичная ситуация в случае с армянами, когда армяне часто называют азербайджанцев «турками», что также воспринимается азербайджанцами как оскорбление. Но, помимо разных интерпретации существующего положения вещей и межэтнического восприятия, здесь объяснения, скорее всего, надо искать в некоторых особенностях азербайджанского этногенетического процесса. Дело в том, что этноним «азербайджанцы» недавно был введен в научный оборот. Так, ссылаясь на азербайджанского автора, заметим, что «этноним «азербайджанцы» стал широко использоваться в обществе начиная с 1936 года»[1]. И до сих пор в истории генезиса азербайджанцев остается много «белых пятен», о чем детально пишет В.Шнирельман в своей книге «Войны памяти: мифы, идентичность и политика в Закавказье» (с.101-258).

Таким образом, распространяющиеся в азербайджанском обществе (как среди азербайджанцев в Грузии, так и в самом Азербайджане) мифы и стереотипы являются отражением и прямым следствием государственной политики»строительства нации» (*nation-building*), что на местах проявляется в виде активного мифотворчества и в поисках своего «этнического составляющего» на территории Закавказья.

Подготовила Т.Варданян

[1] Алекперов А. К., Исследование по археологии и этнографии Азербайджана, Баку, 1960, с 71.

ԱԴՐԲԵՋԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ս.թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի պետական նավթային ընկերության (ԱՊՆԸ) նախագահ Ռ.Աբդուլաևը հայտարարեց, որ Ադրբեջանը նպատակ ունի Թուրքիայում, Ջեյհան նավահանգստին հարող տարածքում կառուցել խոշոր նավթավերամշակման գործարան: ԱՊՆԸ-ն պատրաստվում է գնել 1000 հա տարածք և ներկայումս քննարկում է նախագծի՝ շրջակա միջավայրի վրա թողնելիք ազդեցության հարցերը: Նախագծի իրականացումը կարող է նոր լիցք հաղորդել Ադրբեջան-Թուրքիա էներգետիկ համագործակցությանը և, անկասկած, կարևոր ազդեցություն է ունենալու տարածաշրջանային զարգացումների վրա:

Ըստ նախնական տվյալների՝ նավթավերամշակման գործարանի տարեկան հզորությունը կկազմի 10-15 մլն տոննա նավթ, կառուցման աշխատանքները կարժենան մոտավորապես $4,5-5 մլրդ: Աշխատանքների ֆինանսավորումն իրականացնելու է ԱՊՆԸ-ն՝ միջազգային ֆինանսական ինստիտուտների աջակցությամբ: Այս մասին՝ ստորև, իսկ այժմ անդրադառնանք նախագծի նախապատմությանը, որը մի շարք կարևոր հարցեր է բարձրացնում, այդ թվում և Մերձավոր Արևելքում տեղ գտած ռազմաքաղաքական արդի զարգացումների վերաբերյալ:

Ջեյհանում նավթավերամշակման գործարանի կառուցման նախագիծը երկար ժամանակ է՝ քննարկվում է Թուրքիայում, ինչը պայմանավորված է Ջեյհան նավահանգիստը կարևոր էներգետիկ հանգույցի վերածելու գործընթացով: Սակայն գործարանի կառուցման առաջին և բավական լուրջ հայտը ներկայացրել է Հնդկական նավթային ընկերությունը (ՀՆԸ) 2002թ., երբ սկսվել էր Թուրքիայի էներգետիկ ոլորտի ազատականացման ակտիվ գործընթացը (պայմանավորված ԵՄ և Համաշխարհային բանկի պահանջ-առաջարկություններով): 2006թ. սեպտեմբերին ՀՆԸ-ն թուրքական *Calik Energy* ընկերության հետ Թուրքիայի կառավարությանն է ներկայացնում Ջեյհանում նավթավերամշակման գործարանի կառուցման հանգամանալի ծրագիր: Այն իր արժողությամբ և հզորությամբ ոչ մի բանով չի տարբերվում այն նախագծից, որն Ադրբեջանն է պատրաստվում իրականացնել Թուրքիայի տարածքում: Նշենք, որ նախագիծը դեռևս քննարկվում է թուրքական գործադիր և վերահսկիչ մարմիններում:

Միևնույն ժամանակ, հնդկական ընկերությունները 2006թ. Բաքվի հետ սկսեցին ակտիվ բանակցություններ վարել Ադրբեջանի տարածքում նավթի արտահանմանը մասնակցելու շուրջ: Առավել ակտիվ մասնակցություն ցուցաբերեց *ONGC Mittal Energy* ընկերությունը, որը սերտորեն կապված է ոչ այնքան հնդկական, որքան բրիտանական կառավարության հետ *(ONGC Mittal Energy* ընկերության բաժնետոմսերի մեծ մասը պատկանում է *Mittal Investment* խմբին, որը Յու.Տիմոշենկոյի աջակցությամբ գնեց ուկրաինական «Կրիվոռոժստալ» գործարանը): *ONGC Mittal Energy-ն* հենց բրիտանական *Caspian Energy Group* ընկերությունից այս տարվա հուլիսին գնեց ադրբեջանական «Քյուրովդագ» նավթահորի բաժնետոմսերի 51%-ը:

Նշենք, որ թե՛ ամերիկյան, թե՛ բրիտանական վերլուծաբանները և քաղաքական գործիչները դրականորեն են արձագանքել հնդկական ընկերությունների ակտիվացմանը Կասպիցում և Թուրքիայում: Իսկ ԱՄՆ էներգետիկայի նախարարությունը Ջեյհանում հնդկական կապիտալով նավթավերամշակման գործարանի կառուցումը մինչև վերջերս համարել է ռազմավարական առումով շահավետ նախագիծ: Վաշինգտոնի նման կողմնորոշման համար առանցքային կարելի է համարել այն, որ Հնդկաստանի էներգետիկ ոլորտում աշխատող ընկերությունները և այդ երկրի սպառողական շուկան համարվում են Չինաստանի բնական մրցակիցները և այս տեսանկյունից բավական լուրջ լոբբիստական աջակցություն են ստանում ամերիկյան կառավարության և նավթային ընկերությունների կողմից:

Այս ամենը հաշվի առնելով՝ Թուրքիայի Ջեյհան նավահանգստի շրջանում սեփական ուժերով նավթավերամշակման գործարան կառուցելու ԱՊՆԸ որոշումը, նախագծից հնդկական կողմի ինքնամեկուսացում հիշեցնող հեռացումը, Թուրքիայի կառավարության կողմից

ադրբեջանական նախագծի հաստատումը (Թուրքիայի «Էներգետիկ վերահսկողությունը» նախագծին հավանություն տվեց հոկտեմբերի 6-ին, ԱՊՆԸ կողմից նախագծի վերջնական տեխնիկական առաջարկության ներկայացումից ընդամենը մեկ շաբաթ անց) բավական անսպասելի կարելի է համարել: Եթե ԱՊՆԸ նախագիծը, որը հնդկական նախագծի ճիշտ կրկնօրինակն է, քննարկենք Բաքվի շահերի տեսանկյունից, ապա դրա իրականացումը հետապնդում է մի քանի կարևոր նպատակ.

1. սկսել ագրեսիվ ներդրումային քաղաքականություն տարածաշրջանի էներգետիկ նախագծերում: Սա Ադրբեջանի համար կարևոր է իր էներգետիկ նշանակության պահպանման համար, մանավանդ որ Արևելյան Եվրոպան և Սև ծովի ավազանը արդեն իսկ դարձել են ռուսական և ղազախական բավական ագրեսիվ էներգետիկ ներդրումների գոտիներ,
2. դառնալ ակտիվ խաղացող Թուրքիայի աճող բենզինի շուկայում, եթե չհաջողվի հասնել ադրբեջանական նավթի անհրաժեշտ «միջազգայնացման»՝ դրանից բխող համապատասխան հետևանքներով:

Սակայն շատ կարևոր է այն, թե ինչու հնդկական կողմը «ինքնամեկուսացվեց» նախագծից: Այս հարցի հիմնական պատասխանը, մեր կարծիքով, պետք է փնտրել Մերձավոր Արևելքում՝ ընդհանրապես և Իրաքում՝ մասնավորապես տեղ գտած զարգացումներում: Ջեյհանը հնդկական և մյուս միջազգային ընկերությունների համար կարևոր ներդրումային հետաքրքրություն է ներկայացրել և ներկայացնում է ոչ թե թուրքական այդ նավահանգստի՝ Կասպիցի նավթի արտահանման գործում ունեցած հնարավորությունների տեսակետից, այլ որ Ջեյհանն ի սկզբանե նավթային հանգույցի է վերածվել հենց իրաքյան նավթի արտահանման իր հնարավորությունների և հեռանկարների պատճառով: Կասպյան նավթն ընդամենը հավելյալ գործոն էր, որը սկսեց դեր խաղալ նավահանգստի զարգացման գործում: Հենց իրաքյան նավթի հեռանկարային վերամշակման համար էր նախատեսված Ջեյհանում նավթավերամշակման գործարանի կառուցման նախագիծը, որն առաջինը ներկայացրել էր հնդկական կողմը: Այս տեսանկյունից ՀՆԸ հեռացումը Թուրքիայից կարող է բացատրվել Իրաքի մասնատման գործընթացի ակտիվացմամբ, որը նոր թափ ստացավ Իրաքը դաշնային պետության վերածելու մասին ԱՄՆ օրենսդիրների ընդունած բանաձևից հետո: Իրաքում քրդական պետության ստեղծումը, որի տարածքով թուրքական նավթատարի անցկացումը կամ այդ նավթատարի անվտանգության ապահովումն այսօր և մոտակա տարիներին շատ ավելի դժվար կարելի է պատկերացնել, քան թուրք-քրդական լայնամասշտաբ ռազմական առճակատումը, արդեն իսկ իր ազդեցությունն է թողնում Ջեյհանի հետագա զարգացման վրա՝ այս նավահանգիստը դարձնելով հիմնականում Կասպյան՝ դեռևս ոչ մեծաքանակ նավթի արտահանման հանգույց: Հենց այս փաստն է, մեր կարծիքով, կարևոր դեր խաղացել նախագծից հնդկական ընկերության հրաժարման համար, և նույն այս խնդիրն էլ Ադրբեջանին ուղղում է դեպի վերոնշյալ նախագծի իրականացումը, եթե հաշվի առնենք, որ Ջեյհանը շուտով դառնալու է հիմնականում Կասպյան նավթի արտահանման և վերամշակման հանգույց:

Նշենք նաև, որ ռուսական «Լուկոյլի» հրաժարումը Սամսուն-Ջեյհան նավթատարի կառուցման ծրագրից, որը սևծովյան Սամսուն նավահանգստից Ջեյհան պետք է հասցներ ռուսական և ղազախական նավթը, էլ ավելի կսահմանափակի թուրքական միջերկրածովյան նավահանգստի զարգացումը:

Ինչպես վերը նշել էինք, ԱՊՆԸ-ն Ջեյհանում նավթավերամշակման գործարան կառուցելու համար նպատակ ունի ստանալ միջազգային ֆինանսական կառույցների աջակցությունը, քանի որ ընկերությունն ինքը բավականաչափ ազատ միջոցներ չունի նախագծի իրականացման համար:

Նման երևույթն ինքնըստինքյան ոչնչով տարօրինակ չէ, եթե հաշվի չառնենք այն հսկայական վարկային բեռը, որն ԱՊՆԸ-ն վերջին տարիներին վերցնում է իր վրա:

Միայն 2006-2007թթ. ԱՊՆԸ-ն արևմտյան բանկերից իր նախագծերի իրականացման համար ստացել է $1 մլրդ 760 մլն վարկ՝ չհաշված Ադրբեջանի միջազգային բանկից ստացած $200 մլն և Վրաստանի սևծովյան ափին Կուլևի նավթային տերմինալի կառուցման համար *Societe Generale-ից ու ABN Amro-ից* ստացած $335 մլն վարկերը: Այս պայմաններում Ջեյհա-

նում կառուցվելիք նավթավերամշակման գործարանի ստեղծման համար անհրաժեշտ $4,5-5 մլրդ նոր վարկի ստացումը բավական ծանր իրադրության մեջ կդնի ԱՊՆԸ-ին, եթե, իհարկե, բացառենք այն հնարավորությունը, որ միջազգային վարկերով նախագծերի իրագործումն Ադրբեջանի համար ֆինանսական և տնտեսական միջացների ստվերային վերաբաշխման միջոց չի հանդիսանում: Այս հնարավորության մասին է խոսում գոնե այն, որ Կուլևիի տերմինալի կառուցման համար $335 մլն վարկ ստանալուց և ծախսեր կատարելուց հետո, ըստ ԱՊՆԸ փոխնախագահ Ս.Գասիմովի, ԱՊՆԸ-ն նպատակ ունի մասնավորեցնել այն միջազգային կառույցներին իր վարկային պարտավորությունները մարելու և նոր ծրագրեր իրականացնելու նպատակով:

Ի՞նչ մեխանիզմներով է կատարվելու տերմինալի մասնավորեցումը և ո՞ւմ վերահսկողությանն են անցնելու ներկայումս ադրբեջանական պետությանը պատկանող բարձր շահութաբեր հզորությունները. սրանք կարևոր հարցեր են, մանավանդ որ Ադրբեջանի քաղաքական և տնտեսական ընտրանուն պատկանող և Մերձավոր Արևելքում գրանցված մի շարք ընկերություններ վերջին տարիներին ակտիվորեն գնում են ԱՊՆԸ-ի էներգետիկ նախագծերի բաժնետոմսերը: Ինչևէ, Ջեյհանի նախագծի ինքնուրույն իրականացումը վեր է ԱՊՆԸ ուժերից: Այս պարագայում կարևոր նշանակություն կունենա, թե որ բանկերը կմասնակցեն նախագծի ֆինանսավորմանը, ինչը կարող է լուրջ ցուցիչ հանդիսանալ Թուրքիա-Արևմուտք հարաբերությունների ներկայիս մակարդակի և հեռանկարների զարգացման համար:

Վերջաբանի փոխարեն

Չնայած ներկա տարածաշրջանային զարգացումները, Ադրբեջանի նավթային հատվածում տեղ գտած ոչ ստվերային գործընթացները խոսում են Բաքվի և Անկարայի ոչ այնքան շահավետ դիրքերի մասին, կարևոր է ընդունել, որ ԱՊՆԸ ջեյհանյան նախագիծը լուրջ հայտ է Ադրբեջանի՝ տարածաշրջանային ակտիվ դերակատարի վերածման համար: Նախագծի ֆինանսավորման իրականացման մեջ արևմտյան բանկերի ընդգրկումն էլ ավելի կամրապնդի Բաքվի կապերը միջազգային ֆինանսական կառույցների հետ, ինչն, իր հերթին, կարևոր քաղաքական նշանակություն ունի: Վերոնշյալը Հայաստանի Հանրապետության համար խիստ կարևորում է սեփական տարածաշրջանային էներգետիկ նախագծերի իրականացման հարցը: Սա առաջին հերթին վերաբերում է ՀՀ հարավում նավթավերամշակման գործարանի կառուցմանը: Միևնույն ժամանակ, մեծ նշանակություն ունի Ադրբեջանի էներգետիկ քաղաքականության ավելի նպատակային և մասնագիտական ուսումնասիրությունը, քանի որ ՀՀ վերլուծական և լրատվական դաշտում Ադրբեջանում «հոլանդական հիվանդության» սկսվելու մասին տարածված մտքերն արտացոլում են զարգացումների ընդամենը մի մասը:

Մնակ Սարուխանյան
«Նորավանք» հիմնադրամ

ТУРЦИЯ ПЕРЕД НАЧАЛОМ ВОЙНЫ

Ситуация вокруг Курдистана продолжает накалятся. Боевики из Курдской Рабочей партии продолжают раскачивать ситуацию, не оставляя властям Турции места для маневра. В воскресенье вечером боевики РКК атаковали на границе с Ираком турецких военнослужащих. По официальным данным, погибли 12 военнослужащих, ранены 20. Однако другие источники сообщают о 17 погибших, а также десяти попавших в плен турецких военнослужащих. В результате незамедлительно начатой операции, по данным турецких военных, были уничтожены 32 боевика.

Сразу после воскресной атаки было созвано экстренное совещание политического и военного руководства страны. После него официальную позицию Анкары по курдскому вопросу выразил Абдулла Гюль: «Уважая территориальную целостность Ирака, Турция, тем не менее, не намерена отказываться от того, чтобы заплатить любую цену для защиты своих прав, законов, неделимого единства страны и ее граждан».

Участившиеся за последние дни Атаки курдских боевиков, которые приводят к таким большим потерям в рядах турецкой армии, проходят на фоне обсуждений в самой Турции о начале интервенции на территорию иракского Курдистана. Парламент Турции уже дал добро на проведение военной операции в северных районах Ирака против боевиков Курдской рабочей партии (РКК). Голосование в парламенте прошло практически единогласно: за войну проголосовали 507 из 526-ти парламентариев. Против высказались лишь 19 депутатов меджлиса, которые представляют курдское меньшинство.

Анкару в этом вопросе поддержал Дамаск. Находящийся с визитом в Анкаре президент Сирии Башар Асад прямо заявил: «Сирия полностью поддержит решения, которые в рамках борьбы с терроризмом примет Турция». Следует отметить, то курдская угроза стала причиной серьезных геополитических подвижек в регионе. Некогда кровные враги Сирия и Турция, а также Иран объединили свои усилия в борьбе с курдскими формированиями. На сегодняшний день, несмотря на все разногласия по другим вопросам, Анкара, Тегеран и Дамаск координируют свои действия в вопросе борьбы с курдским сепаратизмом, который угрожает территориальной целостности всех этих трех стран.

Население самой Турции также поддерживает власти. С учетом повысившейся активности курдских боевиков, для Анкары остается слишком мало места для маневра. Если курды будут продолжать в том же духе, то турецкий генералитет будет вынужден пойти на интервенцию, так как невозможно будет продолжать кормить общество лишь обещаниями покончить с курдским сепаратизмом.

В этом случае есть несколько сценариев развития ситуации. По первому, турецкая армия проводит интенсивный и кратковременный рейд в приграничные зоны Курдистана, стараясь нанести максимальный ущерб рядам РКК. При этом власти Ирака и Курдистана принимают позицию резкой критики, однако не вмешиваются в ситуацию, оставаясь лишь на уровне словесной критики действий турецких военных. Подобный вариант возможен, если Анкара и Вашингтон придут к компромиссному варианту и турецкий генералитет неофициально получит ограниченный мандат на операцию в Ираке конкретно против боевиков РКК.

Другой сценарий – жесткая атака на Курдистан при том, что курдские власти предпринимают все меры для защиты своей территории. В этом случае либо турки проводят опять же кратковременную операцию и отодвигаются назад, либо – интервенция превращается в затяжной конфликт, во время которого курды используют как свою регулярную армию, так и партизанские методы борьбы на территории как Курдистана, так и Турции.

Предугадать возможные последствия подобного развития событий весьма трудно, так как при пессимистическом прогнозе могут вспыхнуть также и Сирия и Иран, где также действуют курдские вооруженные формирования, которые добиваются создания большого Курдистана.

Хотя премьер-министр Турции Тайип Эрдоган уже заявил, что Анкара будет вести свою собственную линию по курдскому вопросу, не прислушиваясь к мнению США и НАТО, однако в этом плане многое будет зависеть от того, к какому знаменателю придут турки с Белым домом. Если американцы все же реально поддержат курдов, то формирования курдских пешмерга ввяжутся в конфликт. По сообщению курдских источников, перед угрозой турецкой интервенции только за один день добровольцами в ряды пешмерга (которые уже превышают 100 тыс. штыков) записались порядка 30 тыс. человек.

Курдская Рабочая партия со своей стороны угрожает Анкаре. Лидер боевого крыла Курдской Рабочей партии Мурат Карайылан в интервью британскому изданию *The Times* пригрозил тотальной войной на всей территории Турции: «Если турецкая армия нападет на иракский Курдистан, мы будем сражаться и противостоять этому до самого конца. Война в этом случае начнется не только в иракском, но будет идти и в турецком Курдистане, а также в других городах Турции. Поэтому мы надеемся, что турецкие генералы и политики не последуют этой безумной идее».

По словам Карайылана, в рядах РКК находится до 8 тыс. бойцов (официальные турецкие источники оценивают ряды РКК в 5 тыс. боевиков). Кроме того, в РКК рассчитывают еще на 20 тыс. Добровольцев, которые примкнут к ним в случае начала настоящей войны. В РКК намерены не только вести войну против турецкой армии, но и наносить ассиметричные удары. В частности, речь идет о массовых терактах в турецких городах, в особенности – в туристической зоне, что может стать серьезным ударом по экономике Турции.

В противном случае – если американцы дистанцируются от курдов и турки смогут выторговать себе за счет других уступок нейтральную позицию Вашингтона, – армия Курдистана будет символически вмешиваться в происходящее.

Однако этот сценарий несет в себе возможность дальнейшего закрепления турецкой армии на территории Курдистана под предлогом войны с терроризмом. Этого в принципе и добиваются турецкие военные, цель которых – не допустить проведения референдума в Киркуке и усиления Курдистана за счет присоединения к нему богатого нефтью региона.

Получив возможность действовать на территории Ирака, турецкий генералитет не остановится на достигнутом. Вполне вероятным кажется продолжение продвижения турецкой армии вглубь Курдистана в дальнейшем. Предлогом для этого может стать фактор туркоманов, проживающих в Северном Ираке. Защита прав и интересов этнических братьев туркоманов может стать следующим этапом в турецком сценарии по ослаблению амбиций курдов в регионе. Анкара периодически пытается разыграть туркоманскую карту, и вряд ли не будет ее использовать в дальнейшем для ослабления курдского государства.

И наконец, немаловажным фактором в вопросе военной операции в Курдистане является армянской вопрос. Вопрос голосования резолюции о Геноциде армян сейчас практически напрямую, наряду с другими факторами, связывается с военной операцией в Курдистане. Если турецкий генералитет все же в ближайшее время ударит по Ираку, то вопрос резолюции в Конгрессе вероятнее всего решится не в пользу Турции. Однако если турки все же повременят, либо договорятся с американцами о компромиссном варианте операции, то, похоже, резолюция по Геноциду может быть провалена в Конгрессе.

Самвел Мартиросян

ԱՅԼԱԴԱՎԱՆ ՀԱՅԵՐԻ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

Ինչպես և կանխատեսելի էր, Թուրքական պատմական ընկերության նախագահ Յուսուֆ Հալաչօղլուի հայտնի հայտարարությունը Թուրքիայում ապրող կրոնափոխ հայերի մասին դեռևս արձագանքներ է ունենում և շարունակում նոր զարգացումների պատճառ հանդիսանալ: Ճիշտ է, այսօր արդեն չկան առաջին օրերի բուռն արձագանքները, երբ շատ լրագրողներ, քաղաքական գործիչներ, գիտնականներ իրենց պարտքը համարեցին անդրադառնալ և գնահատական տալ Հալաչօղլուի հայտարարությանը, և կարելի է ասել՝ այդ ալիքը մարել է: Սակայն վերջին ժամանակներս Թուրքիայում առավել շատ քննարկվող ինքնության թեման խորքային առումով գտնվում է թուրքական հասարակության ուշադրության կենտրոնում: Կարծում ենք՝ բավական հետաքրքիր և ուշագրավ է հանգուցյալ Հրանտ Դինքի հետևյալ միտքը Թուրքիայում ինքնության ճգնաժամի վերաբերյալ. «Եթե մի օր Թուրքիան քանդվի, ապա դա կլինի ոչ թե զենքի միջոցով, այլ ինքնության խնդրի»:

